«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՄՐՑԱՆԱԿ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

« ___ » _____2022 թվականի № ____ -Ն

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՄՐՑԱՆԱԿ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության զարգացման գործում ներդրած ավանդի համարպարգևատրման նպատակով սահմանել «Հանրապետություն» մրցանակ և այն շնորհել յուրաքանչյուր տարի՝ սկսած 2023 թվականից:
2. Սահմանել, որ «Հանրապետություն» մրցանակը յուրաքանչյուր բնագավառի համար շնորհվում է համանուն վկայագրի, կրծքանշանի և դրամական պարգևի ձևով:
3. 3. Առաջարկել «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում հաստատել «Հանրապետություն» մրցանակի մրցանակակրի ընտրություն կատարող հանձնաժողովի՝ ըստ բնագավառների, անհատական կազմը և աշխատակարգը:
4. Ընդունել ի գիտություն, որ՝

1) մրցանակի ըստ անվանակարգերի բաշխումը և պարգևատրման չափերի սահմանումը, համապատասխան բնագավառների հանձնաժողովների կողմից մրցանակի թեկնածուներին ներկայացվող պահանջները, նրանց ընտրությունն ու առաջադրումը կատարվում և կրծքանշանի բնութագիրը կազմվում է «Ռոբերտ Պողոսյան և որդիներ» հիմնադրամի և «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջև կնքված համաձայնագրի համաձայն.

2) մրցանակի մաս կազմող դրամական պարգևները, ինչպես նաև կրծքանշանի և համապատասխան վկայագրերի պատրաստման գումարները հատկացվում են «Ռոբերտ Պողոսյան և որդիներ» հիմնադրամի կողմից:

5. 5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ